ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 180-Ա
«06» ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022Թ

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 16-րդ հոդվածի 1.5-րդ մասով, հիմք ընդունելով Արթուր Կարապետյանի հետ կնքած 2021 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ N460 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի «ա» ենթակետը և Արթուր Կարապետյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի սեպտեմբերի 8-ից լուծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արթուր Կարապետյանի հետ կնքած 2021 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 460 աշխատանքային պայմանագիրը:
2. 2022 թվականի սեպտեմբերի 8-ից Արթուր Կարապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի երաժշտական դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը, բայց ոչ ավելի քան վեց ամիս ժամկետով:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի սեպտեմբերի 8-ից:

9/6/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր